

M. Archam Poste Restante
Athènes (Grèce)

ՏԱՐԵԿԱՆ Գրանք 4
ՎԵՑԱՄՍԵԱՅ « 2

ՄԻՈՒԹԻՒՆ

Բաժնեգրի փոխարէն ամեն երկրէ կընդունուի նամակագրոյմ (փուլ):
Ամեն անոնք՝ որ բաժանորդ կը գրուին և առաւաւելն երեք ամիսէն չեն վճարեր չորրորդ ամիսը թերթ չպիտի ստանան:

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ե. Տ Ա Ր Ի

ԱԹԷՆՔ

1901

Յ Ո Ւ Ն Վ Ա Ր

Թ Ի Ի 44

1891—1901

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

Մեր յեղափոխութեան տասնամեակը չը տօնուեցաւ. կուսակցութեանց օւկանները և իրենց բերան եղող... թերթերը առ այդ երկու տող իսկ չի նուիրեցին: Հայ յեղափոխութեան տասը տարուայ կեանքին մէջ կուսին զտշտը անձնուիրաբար նահատակուող հերոսներու, կախաղանի վրայ զոհուող մարտիրոսներու և բռնտին անկիւնները հեծող մեր ճշմարիտ հայրենասէրներու անունները չյիշատակուեցան, զիտէք ինչո՞ւ:—Որովհետեւ ասոնց հետ դուրս պիտի գային նաև ո՛չ նուազ տխուր դէմքեր կեղծ յեղափոխականներ ու բախտախնդիր գործիչներ, որոնց խաղաղած ազգայնաս գերը արդէն հրապարակի վրայ ըլլալով բնական էր որ ծանր պատասխանատուութեան տակ պիտի մնային, հետեւաբար «երկու չարեաց փորձագիշտ» ըսելով խոյս տալին այդ պարտականութիւնը կտտարելէ, և արդէն ուրիշ կերպ ալ չէին կրնար ընել:

Եթէ երբէք իրենց գործունէութեան անցեալը սեւ դոյններով ներկուած չըլլար, Աստուած իմ, պիտի տեսնէիք իրենց թերթերուն մէջ աղմկայող ռէքլամներ, որգործէր գովաբանութիւններ, չլացուցիչ բառեր ու պօռտախօսութիւններ պիտի չապլէին,—փոյթ չէր որ դարձեալ արդիւնք մը առաջ բերած չըլլային—ինչո՞ւ. ինքզինքնին ժողովրդին պաշտել տալու և անոր դառն քրտանց արդիւնքը դէպի Լօնտօն, Ժընէվ և այլուր քաշելու նպատակաւ, մի միայն իրենց ապրուստը ապահովելու համար:

* * *

Հիմա մենք հոս թուենք մեր յեղ. կուսակցութեանց դարավերջիկ տասը տարուայ գործունէութեան արդիւնքը:

Ձանազան կուսակցութիւններ հիմնելով ժողովրդի մէջ երկպառակութիւն ձգեցին ու անոր միացեալ փորձիկ ոյժը անջատ մասերու բաժնեցին, կարծեմ փաստերով խօսելու հարկ չկայ. քանի որ օրինակը թարմ է և դեռ այսօր մեր աչքին առջև կը տեսնենք որ հնչակեան մը հազար անգամ աւելի կ'ատէ դաշնակցականը քան թուրքն ու քուրդը, որոնք իր հայրն ու եղբայրը սպաննեցին, նոյն ատելութիւնը ունի նաև դաշնակցական մը հնչակեանի դէմ:

Կուսակցութիւնները իրենց շուրջը հաւաքեցին այնպիսի անձնաւորութիւններ, որոնք փոյթ չէր որ կեղծաւորներ, խաբէբաններ և աւազակներ ըլլային, բաւական էր որ մի անգամ գոչած ըլլային «կեցցէ՛ հնչակեան կամ դաշնակցական կուսակցութիւն»: Այս կարգի

ստորին արարածներ՝ մեր մեծապատիւ դեկաբրները իրենց գաղափարակից ընկեր ընտրելով, լիազօր իրաւունքներ տուին անոնց յեղափոխութեան դիմա՛լին տակ երթալ պարզա՝ միտ ժողովրդին սպառնանալ, խարել ու անոր աշխատութեան արդիւնքը կորզելով կոկորդէլ: Հարուստներէն նմանապէս բունի մեծաբանակ գումարներ չորթելով իրենց անհատական պէտքերուն յատկացնել, առանց աղքատ Սղգ. յեղափոխութիւնը օգտուելու: Հոս ալ առանց փաստի խօսած չըլլալու համար զեւծանողներու ցուցակը և անոնց կորզած դրամներու քանակութիւնը փնտռելու ենք պ. Նազարբէկի տօմարին մէջ, որ ժամանակին անոնց պետն էր: Զարմանալին այն է որ կեղծարարներու այդ բանակը մինչև այսօր տոկաւին կը պաշտպանուի ու կը պաշտուի մեր կուսակցութեանց կողմէ:

Կուսակցութիւնները՝ շտհագործելու միջոց մը ընտրեցին յեղափոխութիւնը, ու արդէն իրենց շինած դիրքը անխախտ պահելու միտով գոյութեան կռիւ մղեցին և եռանդազին յեղափոխութեան սարքերէն Պապա-Ալեքի ու Պանքի տխրահաշտի ցոյցները, որոնց հետեւանքով մեր տուած անհամար կորուստը արդէն ամենուս ծանօթ ըլլալով, զանց կառնենք հոս յիշել:

Կուսակցութիւնները, ոչ թէ ի նպատակ աղբիւն աղատագրութեան, այլ ի նպատակ իրենց կոկորդին հացի կռիւ մը մղեցին, բաւական է որքան կերաւ Նազարբէկը, քիչ մըն ալ մենք ուտենք» ըսելով—փոյթ չէր որ աղբի մը արժանապատուութիւնը պիտի նսեմանար, հացի խնդիր է այս ուրիշ բան չէ—Լօնտօնի դատարանները տակն ու վրայ ըրին և մինչև այդ օրերը որ դեռ յեղափոխութիւնը կանգուն կը մնար և ներքին ու արտաքին թշնամիներու սարսափ կը պատճառէր, այդ կերպով մահացու և վերջին հարուածը տուին հայ յեղափոխութեան ու հիմնայատակ ըրին զայն, որուն համար աւա՛ղ, խեղճ հայութիւնը հաղարաւոր զոհեր տուած ու իր հայրենիքի հողերը արիւնով ներկած էր:

Կուսակցութիւնները դիկտատորութեան խաղաղանը ձեռք առած չէին վարաներ երբեք մահացու հարուածը իջեցնել այնպիսիներու գլխին, որոնք հայրենասիրական եռանդէ թելադրեալ կը համարձակէին դիտողութիւն ընել անոնց աղբակործան արարքներու դէմ: Ինչպէս Համիտական բռնապետութիւնը ապականուած տարրէ չըջապատուած, ամենուրեք քաղաքագէտ և հայրենասէր թուրքերը քսորաւայրերն ու վոսփորի յատակը նետելով թանկագին կեանքեր փճացուց, նոյն ըրին մեր կուսակցութիւնները Կիպրոսի, Տփլիսի և Թաւրիզի մէջ սպաննել տալով հայրենասիրութեան տիպարն եղող իսկական յեղափոխականներ:

Կուսակցականները վերջապէս տեղի տուին եղբայրասպան կռուին: Ստեղծեցին եսական և փառատիրական ըէ՛ ժ ի մը, ու իրարու օձիկէ բռնած «եռ», «դու» ըսելով զիրար բզկտեցին, իրենց թերթերը լեցուցին հայհոյիչ բառերով, մատնիչ, գաւաճան անուանելով զիրար, և փոխանա՛յ ժողովրդին մէջ յառաջդիմական շարժում մը բերելու, անոր սրտին մէջ իսպառ մարեցին հայրենասիրական եռանդը, մէկ խօսքով աւելի լրբացուցին զայն, այնպէս որ յանուն ազդասիրութեան կամ յեղափոխութեան, այսօր կուտ մը տուող չէս գտներ այն եռանդոտ ու պարտաճանաչ ժողովրդին մէջ:

Այս ախուր իրականութիւններէ վերջ, այսինքն հինգ տարի առաջ երբ Միութեան խընդիրը հրապարակ նետուեցաւ, ա՛լ ամեն հայ կը յուսար թէ մեր աղատագրութեան նախանձախնդիր կուսակցականները անցեալի դառն փորձերէ խրատուելով, այս անգամ դէպի աջ գային իշական շահերը առաջդիմական քայլ մը պիտի առնէն. բայց որո՞նք էին այդ հրէշները. գիտէ՞ք. նոյն եսամոլ և բախտախնդրներն էին, որ ո՛չ թէ ազգին աղատութեան համար կաշխատէին, այլ իրենց կաշին հասցնելու համար. ինչպէս ի վերեւ արձանագրեցին: Ի սկզբան մեր կուսակցականները նախելով ժողովրդին միութեան գաղափարի փաթիլը և անոր պահանջկոտ միահամուռ ձայնը. առ երեւոյթս անոր համակերպիլ ձեւացուցին, ու Լօնտօնի, Ժընէվի, Ամերիկայի, Վաշինգտոնի և Եգիպտոսի մէջ մինչև իսկ Արփիարներ. Եւսուսֆեաններ, Արվախիներ բեմին վրայ Միութիւն կը բարոզէին, իրենց վերապահեալ թաքուն նպատակաւ մը, մինչդեռ ի ներքուստ կայծակի արագութեամբ նամակներ կը տեղացնէին իրենց դասակից եղող պարզամիտներուն և կամ իրենցմէ մասնաւոր շահեր ակնկալող խնկարկուներուն, որպէս զի հակառակին միութեան գաղափարի իրականացման, ինչուոր հետեւանքը կուսակցութեան քայքայման վտանգ կ'սպառնար: Այս խօսքով ըսել կուզէին թէ՛ երբ միութիւնը իրականանար, իրենք դուրս վտարուելով հացիւնին կորստած պիտի ըլլային: Ճշմարիտ է որ ունեցանք ոչ նուազ հայրենասէր կուսակցականներ, որոնք մեծ ամասնութիւն չկազմելով ի նպատակ միութեան գաղափարի իրենց բոլոր աշխատութիւնները ապարդիւն մնացին: Հեռաւապէս միութեան խնդիրը ջուրն ինկաւ: Հոս չի մոռնանք յիշել թէ՛ միութեան գաղափարի սոսկ թշնամիներու առաջինը հայրենասէր Արփիար Արփիարեան, թէ՛ Դաշնակցութեան կարեւոր անդամներու, մեծ մասն անոնք վար չի մնացին, «կեղրոնացում» պակեղրոնացում» և «ձուլում» բառերը մէջ տեղ նետելով: Բայց ամեն պարագայի մէջ Արփիար մը արդարացնելն ինքնին դատաւանութիւն է, քանի որ Սղգ. ամեականութիւնը չու-



- Ազգային վարչապետներ. — Ինչ է այդ բերածդ սրբազան :
- Օրմանեան պատրիարք. — Նոր տարւոյ առթիւ վեհ. սուլթանի ազգիս շնորհած պարգևներն են, պատը-
րիարքարան հը փոխադրեմ :
- Ազգ. վարչ. — Բայց այդ պարգևները, 1895 — 1896 ի սուլթանական հանրաժառօթ շնորհնէ -
րուն չեն նմանիր եա :
- Օրմանեան պատր. — Այո. տուրակիս մէջ պարգևներն, այս անգամ բոլորովին տարբեր են և աւելի
ծանրակշիռ : Մեր գործելու եղանակին վերաբերող հրահանգներ են, զորս եթէ
ճշդապահութեամբ ի գործ դնենք, առանց երկար աշխատութեան պիտի յաջողինք շու-
տով զերեջման իջեցնել հայութիւնը :

հերը զոհեց իր եսին: 1896-ին «Միութիւն»ը բարեկամաբար խորհուրդ տուաւ իրեն յեղ. հրապարակէն առժամապէս հեռանալ. քանի որ հակակուսակիցները իր անձը միայն խոչնդոտ մը կը համարէին միութեան իրականացման: Նա իր որոշման մէջ անդրդուելի մնաց և իր հետևորդներն ալ խաբից թէ ինքը եթէ հրաժարի դաշնակցականները դարձեալ չպիտի միանան: Նոյն խորամանկ Արփիարն էր որ վերջերս առաջարկուած Համագործակցութեան ժողովոյ իրականացման դժամանակ ստորին միջոցներ ձեռք առաւ արգելք հանդիսանալու համար և ճիշդ այդ ժամանակները տաք ապուրին մէջ պաշտ ջուր խառնելու գիտաւորութեամբ ընկերային ատենի խնդիրը հրապարակ նետեց. գիտնալով որ դաշնակցականներու կողմէ չպիտի ընդունուէր: Ինչ որ, է նպատակն այս բարդ խնդիրներու մանրամասնութեանց մէջ մտնել չէ, առ այժմ թողունք այդ մարդը որ ի վնաս հայութեան իր հանրածանցի գերը խաղալ շարունակէ: Ինչպէս որ իր համակիրները յանգին անոր հայրենասիրական եռանդուն աշխատութեանց արդիւնքին:

Այժմ դառնանք Հ. Յ. Դաշնակցութեան՝ որ վերջին տարիներուս մէջ ամենազօրաւոր կուսակցութիւնը նկատուելով պահ մը կը կարծուէր թէ իր գոյութիւնը նոյն բարձրութեան մէջ անբիծ պիտի պահէր միշտ, բայց ցաւալի է ըսել որ երկար չտևեց. ապակեզրոնացումը կեդրոնացումէն աւելի սոսկալի աղէտաբեր եղաւ հայ ժողովրդին համար: Դեռ երեկ մեր բթին առջև կատարուեցան զէնքերու վաճառման և Տիկնանց մասնախմբի 2000 Փրանքի խոշոր զննչները, այն ալ ի շնորհս ապակեզրոնացման, Դաշնակցութեան Պալքանեան ձեռնհաս մարմնոյ նախաձեռնութեամբ:

Յեղ. կուսակցութեանց զլխուն փորձանք դարձաւ միամիտ շանկիւնանը, խերով բարով ազատուած ըլլար Աքիայի արտորակային: Իր «Դիմակաւորներու» Արփիարի գէմ մեղանչեց և արտաքուսեցաւ անոնց բարեկամային շրջանակէն: Վառնայ եկաւ այդ պօզ պօզ ազգ (?) մարդը՝ Դաշնակցութեան զեղծումները հրապարակելով անոնց աչքէն ալ ինկաւ. ըստ թրքական առածին թէ՛ «տողրու սէյ-լէյէն եհտի քէյոյտէն գօվուլուր»: Հայ հասարակութիւնը եթէ քիչ մը լրջօրէն խորհի, պիտի տեսնէ որ հրապարակի վրայ երեցող մարդ մը այն ատեն միայն կրնայ համբաւ մը և կամ դիրք մը չի նկատ, երբ որ և է կուսակցութեան մը կեղծաւորութիւններ կամ շողորթորթութիւններ չապլէ. հակառակ պարագային անոնցմէ կ'արհամարհուի և զանազան... մակդիրներով մկրտուելով հասարակութեան առջև վարկաբեկ կը լինի. ինչո՞ւ, որովհետեւ մարդն անկեղծ ու անկողմնակալ եղած է:

Ահա մեր յեղափոխական ըսուած կուսակցութեանց հրաշագործութիւններն և վերջին տասը տարուայ իրենց ամբողջ գործունէութեան բովանդակութիւնը, որ հայ յեղափոխութեան տխուր պատմութիւնը կը կազմէ: Այլ ինչպէս պիտի յանգնէին առանց ամաչելու հայ յեղափոխութեան տասնամեակի, առթիւ ընդհ տեսութիւն մը ընել ու տասը տարուան մէջ բոլոր պատահածները իրենց իրական գոյներովը ներկայացնել:

Եթէ միութեանական կէտ մը կայ, այն է թէ հայ ժողովուրդը՝ թէ և քիչ մը ուշ, բայց

վերջապէս սկսած է սթափուիլ և լաւ ճանաչել իր ճակատագրին հետ խաղացող կուսակցութիւնները: Մանաւանդ որ կուսակցութիւններէ քաշող չէ զոքներու թիւը երթալով ստուարանալու վրայ է. իսկ կուսակցութեանց մէջ մնացողներն ալ հետզհետէ իրենց պիտեբու ավագինսս ընթացքը տեսնելով հեռանալու վրայ են: Համոզուելով թէ կուսակցութեանց և ո՛չ մին չպիտի կրնայ իր գոյութիւնը պահպանել, քանի որ անոնց բառարանին մէջէն անկեղծութիւնն բառը վտարուած է:

Կուսակցութիւններէ բաժնուողներու մէջ շատ դժուար է գտնել յեղափոխական մը, որ միութեան փափաքող չըլլայ, ամենքն ալ առհասարակ ի նպատակ միութեան գաղափարի իրականացման գործնական միջոցներ ձեռք առած կաշխատին վառնայի և Ամերիկայի մէջ: Կոչում կրնենք ամեն այն կուսակցական մեր եղբայրներուն, որ եթէ կը բաղձան իրենց տառապեալ ազգին, թշուառ Հայրենիքին գործնական ծառայութիւն մը ընել, թող զաղբին եսամոլ, փառամոլ, եղբայրասպան կուս մողղ կուսակցութեանց կոյր գործիք մը ըլլալէ, և եթէ կը հաւատան միութեան օգտակարութեանը, թող հաւաքուին ոչ-կուսակցականներու շուրջը, ձեռք ձեռքի տալով առայժմ աշխատին, մինչև որ տեսնենք գաղափարակիցներու ստուար թիւ մը, այն ատեն մեզ վերապահեալ բացառիկ միջոցներով պիտի տեսնենք «Հիմնական Միութիւն» որով միայն կարելի պիտի ըլլայ փրկել մեր Հայրենիքը:

ՀԱՅՈՏ

Վառնայ 23 Յունիւ. 1900

ՆԱԽԱԿ ԴՈՒՍԱՍՏԱՆԷՆ

Սեդուլին, 23 դեկտ. 1900

Սմբագրութեանդ առաջարկած «Համագումար ժողովուրդ առիթ ընծայեց ինձ հրապարակ իջնել և մեր ազգային գործիչներու մասին համառօտօրէն խոնարհ կարծիքս յայտնել:

Հայութեան ներկայ պաշտ պօզուրդութեան մէջ, Ազգ. «Համագումար ժողովի» մը գումարումը՝ կարի յոյժ և զգալի անհրաժեշտ պէտք մը դարձած է ընդհ. հայութեան և զրեթէ անոր օրուան հարցը եղած է: Զարմանալու արդար իրաւունք մը կը մնայ մեզ թէ՛ արդեօք ինչո՞ւ կուսակցութեանց շրջանակներու մէջ պէտք եղածին չափ էր ազգեցութիւնը չունեցաւ Ձեր անկողմնակալ առաջարկը: Շիտակը այս անհասկանալի կէտը ես տրամադիր էի Ձեզ հարցանել, տակաւին Ձեր նամակը չստացած: Բայց որովհետեւ դուք ինչ առաջ կուսակցութեանց անկեղծութեան վրայ կասկածներ յայտնելով այդ խնդրոյ շուրջը դարձող մի քանի սրտայոյզ, բայց արդար դիտողութիւններ կ'ընէք Ձեր... նամակով, սիրելի գաղափարակիցներ, ներեցէք ինձ, որ կուսակցութեանց այդ կենսական հարցին մէջ անոնց ցոյց տուած սառնացած ոգին ու անտարբերութիւնն անարժանաբար Ձեզ բացատրելու համարձակութիւնն ունենամ:

Մեր Յեղ. կուսակցութիւնները կամ ազգասիրական եռանդէ թելադրեալ, հայրենասէրներու խումբեր կազմած՝ իւրաքանչիւրը կը ձգտի անպատճառ ազգը իր ձեռքովը փրկել, և կամ աւազակային խումբեր կազմած հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը առերեսով իրենց գրամագրուի ընտրած, արդէն

ի վաղուց չարչարուած, կողոպտուած և բազմադիմի զրկանքներու ենթարկուած խեղճ Հայութիւնը բոլորովին մերկայնելով իրենց կաշին հասցնելու կը ջանան: Զգիտեմ թէ՛ այժմ երկուքէն որն է անոնց նպատակը. բացարձակապէս վճռական որոշում մը տալու չիտակը ես ալ կը վարանիմ. բայց վերջապէս ինչ որ ալ ըլլայ, Ազգ. Մեծ-Գործին—Յեղափոխութեան—հանդէպ անոնց կեղծարար ընթացքը՝ արդէն ինքնին կը պարզէ զուտ ճշմարտութիւնն ու իրողութիւնը, զորս ամեն ոք կարող է հետօրէն ըմբռնել, եթէ ունի աչք տեսնելու և ականջ լսելու:

Հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը՝ այս պարագայիս չարչիւններու առեւտրական մի պարզ գործ դարձած է. ով որ թերթ մը հրատարակէ, ով որ իր պատկանած կուսակցութեան կեղծաւոր շողորդութիւններ չըռայէ—անպատճառ նիւթական կամ փառասիրական չա՛ մը ականալելու նկատումով— և ով որ քիչ շատ ազգեցիկ գրիչ մը ունի, այն է ազգասէրը, այն է հայրենասէրը և այն է օրուան յեղափոխականը (?): Անոր գրչէն ելածներն ալ երկինքէն իջած Աստուծոյ պատգամներն են: Իսկ միւս կողմէ հայ ժողովրդի միամիտ դասակարգին «Տէրն այսպէս ասաց» ի նախապաշարումն է, որ կարգիլէ ազգ. ամեն կարգի յաջողութիւն ու յառաջդիմութիւն:

Յարգելի ընթերցողը՝ մեր գծած տողերու ճշմարտութիւնը հաստատելու համար ականալի մը թող նետէ արտասահմանեան հայ թերթերու վրայ, որոնք երկու մասի բաժնուած, փոխանակ հանրային իսկական շահուց ծառայելու, իրենց պատկանած կուսակցութեան պնդում չա՛նքը կը պաշտպանեն: Իրացնալ կացութեան մէջ եթէ երբէք անկողմնակալ ոգի կրող ո՛ր և է թերթ մը՝ երբ համարձակի անաշուօրէն քննադատել իրենց ազգակործան ընթացքը, կը տեսնեն յանկարծ գրչակալ վարպետորդները՝ անոր արդար ձայնը խեղդելու և անոր գրածներու ազգեցութիւնը ջախջախելու թաքուն նպատակաւ, անճոռնի, գռեհիկ բառերու շարքով մը սուտ ու փուտ. գրչի արհեստով չինձու զրպարտութիւններով կը փութան վարկաբեկ ընել զայն հասարակութեան առջև: Ահա հայրենասիրութեան ու ազգասիրութեան նորեկուկ մօտան որ դժբաղդաբար մուտ գտեր է հայերուս մէջ:

* * *

Ընթերցող, ի վերեւ դրուած տողերը կարդացած պահուդ քիչ մը ուշի եկուր և իբր մարդ՝ զգացում ու դատողութիւն ունեցիր ու պատասխանէ մեզ. եթէ դու Դաշնակցական մը կամ Հնչակեան մըն ես, ինչ որ ալ ըլլաս, անաշուօրէն խոստովանէ՛. գոյութիւն ունեցող երկու գլխաւոր կուսակցութիւնները, մէկը մէկու սոսկ թշնամի մնալու պայմանաւ եթէ արդի ընթացքին շարունակեն ժամանակ մը ես. ազգային շահերը կը պաշտպանուին, թէ՛ կը վտանգուին. երբ այս հարցին ճշգրիտ պատասխանը տալու կարողութիւնն ունիս, իսկոյն պատկանած կուսակցութենէդ հեռանալով միութեան փրկարար գաղափարին պիտի հետևիս ու անոր դրօշակակիր առաջին զինուորը պիտի դառնաս, նկատելով որ երկու հակառակ կուսակցութեանց ազգակործան ընթացքը վերջապէս հայութիւնը գերեզման իջեցնելու կը ծառայէ: Հինգ տարիներէ ի վեր Միութեան խնդիրը վերջին անգամ ըլլալով (Շար. տեսնել յաջորդ թւոյն մէջ)



Սուլթանը. — (այլախերպ և սարսափար վիճակի մէջ՝ ինք զինքը Գերմանիոյ Գոգը նետած վիլհելմի պաշտպանութիւնը կը խնդրէ) Ըսեւ՛ ձեռքդ ընդհ. քրիստոնէութեան մէջ եթէ ունիմ ծշմարիտ Բարեկամ մը, Ձեր վեհափառութիւնն է: — Խնդրեմ օգնութեան հասէ՛ք և փրկե՛ցէ՛ք զիս այդ վայրենի արջի յարձակումէն ու սա՛ հատաղի շներու վոհմակէն, որ պէրլիի դաշնագրութեան մի քանի յօդուածներու յենլով կը սպառնանան Բզկտել զիս:

Վիլհելմ. — Վէհ. Տէր. Վստահ եղէ՛ք որ իբր Ձեր մտերիմ Բարեկամը մինչև վերջին շունչս պիտի պաշտպանեմ զձեզ: Ձեր յիշատակները Գերմաններու սրտին մէջ անմոռաց պիտի մնան յաւիտ: — Երբեք թող չվհատեցնէ զձեզ Եւրոպական Թուրքիայէն հրաժարելն. Դուք՝ նորէն պիտի պահէ՛ք Ձեր Գոյութիւնը փոքր-Ասիոյ մէջ իբր հզօր պետութիւն մը: — Միայն սա պիտի խնդրեմ մէ որ չի մոռնայիք Ձեր երկրին մէջ ոյժ տալ Գերմանական վաճառականութեանը զարգացման:

Սուլթանը. — Ամենայն սիրով, Բայց նախ անվտանգ հասնինք իմ նոր Մայրաքաղաքը, այն ատեն ընդ երկար կ'ստենուինք: Այն Զարդերն էին, որ զիս այս վիճակիս հասուցին. իցի՛ն թէ այդ խորհուրդը տուած չլինէիք ինձ, Դուք և իմ վաղեմի Ձարը: Ինչ որ է ամէն բան լինցած և Սուհաճօտին ըսածը արդէն կատարուած է: Տայերը թող հայաստան երազ գիտնալու թէ՛ քիչ ատենէն իրենց նմոյշը անգամ չպիտի ձգեմ երկրիս մէջ:

Վիլհելմ. — Թագաւոր Թագաւորաց. ուշ թէ կանուխ, վերջապէս օր մը՝ Եւրոպական Թուրքիան ստիպեալ պիտի թողնէի, հայկական կոտորածը աւելի փութացուց այդ Գործը: — Թէ՛ ո՛վ էր ջարդերուն Բռն պատճառը, վերապահութեամբ խուսովանիմ, երբ նոր Գահուտ վրայ հաստատուիս: